



Տեղադրման և շահագործման ցուցումներ

Ընդհանուր պահանջներ Կլիմայական պայմաններ


Տեղադրումից առաջ, հետո և ընթացքում կլիմայական պայմանները սենյակում պետք է համապատասխանեն հետևյալ պահանջներին.

- ներսի օդի ջերմաստիճանը $> +18^{\circ}\text{C}$
- հատակի մակերեսի ջերմաստիճանը $> +15^{\circ}\text{C}$
- օդի հարաբերական խոնավությունը 40% - 70%:



Ակլիմատիզացիա


Տեղադրումից առաջ, առանց փաթեթները բացելու, 48 ժամ լամինատե հատակը թողնել սենյակում, որտեղ դրանք պետք է տեղադրվեն:




Ծածկվող մակերեսը

Բոլոր մակերեսները պետք է համապատասխանեն ընդհանուր տեխնիկական բնութագրերին և ելնելով գործող չափանիշների տեսակետից՝ պիտանի լինեն հատակածածկմանը: Մակերեսը երեսարկման համար նախապատրաստելիս հատուկ ուշադրություն պետք է դարձվի հետևյալ պահանջներին.


- Չորությանը, խոնավության պարունակության նորման (նշված է քաշային խոնավությունը) ծածկասալիկների համար-4 %, ցեմենտաավազային սվաղի համար-5%, տախտակային հիմքի համար-7% ոչ ավել:



- հարթությանը (հատակի առավելագույն տատանումը մեկ մետրի մեջ ոչ ավել քան 3 մմ)



- կարծրությանը / բեռնատարողության ունակությանը
- երեսարկվող մակերեսի մաքրությանը:



Բացի անկար հատակից, որպես երեսարկվող մակերես կարող են ծառայել նաև ՊՎԹ հատակները, լինողեումե, ռետինե կամ փայտե մակերեսները, եթե դրանք բավարարում են վերը նշված պայմանները:

Ոչ պիտանի հիմքեր են համարվում տեքստիլից հատակածածկույթները: Սահմանափակ պիտանի են համարվում էլեկտրական ջեռուցումամբ տաք հատակները:


Ջրով տաքացվող հատակների օգտագործումը

Լամինատե հատակածածկույթը կարող է տեղադրվել ջրային ջեռուցումամբ հատակներին: Այս դեպքում օգտվեք ջրային ջեռուցումամբ հատակներ արտադրողի հրահանգներից:

Էլեկտրական ջեռուցմամբ հատակների օգտագործումը

Էլեկտրական ջեռուցմամբ հատակները սկզբունքորեն պիտանի են լամինացված հատակների հետ օգտագործման համար, եթե ջեռուցման տարրերը ներդրված են անկար հատակի մեջ կամ բետոնե շերտի մեջ, և տեղադրված չեն նրա վրա ժապավենաձև Էլեկտրական տաքացուցիչի տեսքով:

Ուշադրություն. Մակերեսի ջերմաստիճանը չպետք է գերազանցի 28°C:




Էլեկտրական ջեռուցիչների հիմքի վրա գործող տաք հատակները կարող են պիտանի լինել լամինացված հատակների հետ օգտագործվելու համար, եթե ջեռուցիչի արտադրողը երաշխավորում է, որ մակերեսի ջերմաստիճանը երբեք չի գերազանցի 28°C: Ժապավենաձև Էլեկտրական տաքացուցիչի հիմքի վրա գործող ստանդարտ տաք հատակները ջերմաստիճանի ծայրահեղ փոփոխությունների դեպքում արտադրում են շատ ավելի բարձր ջերմաստիճան, քան 28°C, և հետևաբար համարվում են երեսապատման համար ոչ պիտանի հիմք:

Տեղադրումը


Հատակի երեսարկման հիմնական կանոնները

1. Մինչև երեսապատումը անհրաժեշտ է ստուգել հատակակտորների հնարավոր տեսանելի թերությունների առկայությունը: Արգելված է օգտագործել վնասված հատակակտորները:






2. Լամինատե հատակների հավաքման համար Ձեզ անհրաժեշտ են. չափերիզ, մատիտ, սղոց, մինչև պատը տարածությունը պահելու համար պահանդներ, 0.2մմ


հաստությամբ պոլիէթիլէնային շերտ, ձայնամեկուսիչ տակդիր՝ 3 մմ ոչ ավել բարձրությամբ, և, որոշ դեպքերում, սոսինձ:




3. Անկար հատակների կամ հանքային հիմքով հատակների մակերեսը պետք է ամբողջությամբ ծածկված լինի անշրանցիկ պոլիէթիլէնային շերտով: Ընդ որում հպման տեղում շերտերը պետք է տեղադրվեն իրար վրա առնվազն 200մմ: Նաև խորհուրդ է տրվում բոլոր հիմքերի համար ձայնամեկուսիչ տակդիր: Տակդիրը դրվում է հպանցիկ, այսինքն ոչ իրար վրա (տես նկար 1 փաթեթի վրա):




4. Լամինատե հատակների մասերը միշտ տեղադրվում են լողացող ձևով:
5. Հատակակտորների անշարժ ամրացումը երեսպատվող մակերեսին (սոսինձ, պտուտակներ, մեխեր) չի թույլատրվում:




6. Հարակից շարքերի հատակակտորների միացման գծի նվազագույն շարժը՝ 200մմ:



7. Բոլոր պինդ շինարարական մակերեսների փոխհատուցողական ճեղքվածքը 8 - 10 մմ:




8. Բոլոր դռնանցումներում, անցումներում, դժվար կոնֆիգուրացիայով տարածքներում, ինչպես 10մ-ց ավել երկարությամբ կամ լայնությամբ տարածքներում պետք է տեղադրել անցումներ / շեմեր:




9. Խորհուրդ է տրվում հատակածածկերը տեղադրել այնպես, որ սենյակի պատուհանի լույսը ընկնի հատակակտորների երկայնական միացման գծին զուգահեռ: Այս դեպքում հատակածածկույթի միացման գծերը կլինեն ավելի քիչ նկատելի:

Stacking կարգը


1. Չննեք հատակակտորները, գտեք նրանց վրա ակոսը (A) և սանդեղը (B):



Առաջին շարքի երեսարկումը սկսեք սենյակի ծախ անկյունից: Հավաքեք այնպես, որ սանդեղը (B) հատակակտորի երկու կողմերը լինեն դեպի պատը: Երեսարկումը սկսելիս տեղադրեք պահանդներ՝ պատից համապատասխան հեռավորությունը պահպանելու համար:




Հավաքեք շարքը՝ հատակակտորները միմյանց միացնելով լայնակի կողմով, հետևյալ ձևով. առաջին և յուրաքանչյուր հաջորդ տեղադրվող հատակակտորին միացրեք նորը՝ անկյան տակ մտցնելով սանդեղը՝ արդեն տեղադրված հատակակտորի ակոսի մեջ: Այնուհետև իջեցրեք տեղադրվող հատակակտորը այնքան, մինչև այն ամբողջովին նստի հատակին:






2. Չափեք առաջին շարքի վերջին հատակակտորի վրա ցանկալի երկարությունը և սղոցեք կտորը չափած տեղով: Սկսեք երկրորդ շարքի տեղադրումը առաջին շարքի վերջին կտորի մնացորդից, եթե նրա երկարությունը 200մմ պակաս չէ: Բոլոր հետագա շարքերի երեսարկումը պետք է սկսել նախորդ շարքի հատակակտորի մնացորդով:

Ուշադրություն. Երեսարկման ժամանակ ամեն հաջորդ շարքի հատակակտորների եզրափակիչ հողերը պետք է շեղված լինեն յուրաքանչյուր հաջորդ տողի հատակակտորներից առնվազն 200մմ: Փորվածքներով և / կամ հատուկ դեկորով (օրինակ, մոդելավորման սալիկների) ծածկույթներ տեղադրելիս անհրաժեշտ է հետևել, որ շեղումը լինի հավասարաչափ և համապատասխանի փորվածքին և նկարին:



3. Երկրորդ և հետագա շարքերը տեղադրումը սկսեք հատակակտորներից՝ միմյանց միացնելով լայնակի կողմով:

Շարքը հավաքվելուց հետո բարձրացրեք այն, անկյան տակ՝ նախորդ շարքի ակոսի մեջ մտցրեք սանդեղը և իջեցրեք, մինչև շարքի ողջ երկարությամբ կողպեքի փակվելը:




4. Որպեսզի վերջին շարքի տարրերը առավել ճշգրիտ կտրել.

- պատից 8-10 մմ հեռավորության վրա գտնվող հատակակտորի միջոցով գծանշում արեք նախավերջին շարքին
- տեղահանեք այդ շարքը և կտրեք ավելցուկային մասը ըստ Ձեր նշումի
- նախավերջին շարքը տեղադրեք նոր հատակակտորներով
- օգտագործեք կտրված հատակակտորների շարքը որպես վերջնական:

Հասարակական և առևտրային շենքերի հատակի երեսարկում

Հասարակական և առևտրային շենքերի հատակի երեսարկման ժամանակ պետք է հաշվի առնել այդպիսի շինություններին բնորոշ միջին խոնավության մակարդակը: Այդ դեպքերի համար նախատեսված է տարրերի ամրացումը հատուկ սոսնձի միջոցով: Սոսինձը քսվում է էվերինեզրի նայնպես, որ տեղադրման ժամանակ սոսնձի մնացորդը դուրս գա դեպի վեր տարրերի բոլոր կարերից: Սոսնձի մնացորդները կարելի է հեռացնել ամսիջապես կամ մի քիչ չորանալուց հետո:



Ուշադրություն. Համոզվեք, որ սոսինձը քսելուց հետո հատակակտորների միջև չեն մնացել անցքեր:

Դռների կողատուփեր


Խորհուրդ է տրվում կարճեցնել դռների կողատուփերը լամինատե ծածկույթի և տակդիրի ընդհանուր բարձրության չափով: Այնուհետև հատակները պետք է տեղադրել այնպես, որ հատակակտորը մտնի դռան կողատուփի տակ՝ միաժամանակ պահպանելով փոխհատուցողական անցքը (8-10 մմ) հատակի պատի և /կամ մյուս պատի միջև: Այն դեպքում, երբ դուք ավարտում եք տեղադրումը այդպիսի դռան շրջանակի մոտ, ապա այդ հատվածում հարկավոր է կտրել արդեն տեղադրված հատակակտորի ակոսի դուրս եկող ներքին հատվածի փականը, որպեսզի նոր հատակակտորը կարողանա տեղադրվել հավասար պառկած (տես նկար 9): Այդ հատվածում միացումը ապահովվում է հատուկ սոսնձի միջոցով:

Եթե դռան շրջանակը չի կարող կարճեցվել, օրինակ՝ մետաղյա շրջանակները, լամինատե հատակի ու պատի և / կամ այլ հատակի միջև կարերը պետք է լցվեն առաձգական զանգվածով կամ փակված լինեն համապատասխան եզրափակող պրոֆիլներով:


Խողովակների տակի երեսարկումը.

- Չափեք խողովակի դիրքը և նշեք այն հատակակտորին՝ հաշվի առնելով փոխհատուցման արանքը


- Արեք անցքեր, որոնց չափը լինի առնվազն 16 մմ ավելի մեծ, քան խողովակի տրամագիծն է



- Կտրեք հատակակտորի մի մասը անցքերի համեմատ 45° անկյան տակ




- Կտրված մասը հարմարեցրեք մյուսներին և սոսնձեք:




Տեղադրումից հետո Առաջարկություններ


- Կահույքի ոտքերին ամրացրեք փափուկ կտորից բարձիկներ:





- Ճանր կահույքի տեղաշարժման դեպքում բարձրացրեք այն:




- Բազմոցների և աթոռների անիվները պետք է լինեն փափուկ տեսակի:



– Սրբեք հատակը ոչ թե թաց, այլ մի փոքր խոնավ կտորով:




– Հատակին ջուր թափվելու դեպքում պետք է անմիջապես չորացնել այն:




– Մի օգտագործեք հղկող մաքրման միջոցներ և այլ նյութեր, որոնք շփումով կարող են վնասել հատակը:


– Մի հղկեք հատակը, մի ծածկեք այն մոմով կամ լաքով:



– Թույլատրվում է օգտագործել փոշեկուլներ չոր մաքրումով:




– Չի թույլատրվում օգտագործել փոշեկուլներ խոնավ մաքրումով (լվացող փոշեկուլներ) և գոլորշամաքրիչներ:



- Պաշտպանեք հատակածածկույթը կոպիտ կեղտից՝ օգտագործելով մուտքի տարածքում աղբակլանիչ գորգեր:



- Հատակի մաքրող միջոցները պետք է լինեն ակոհոլի կամ քացախի հիմքով: Ինչպես նաև, որպես մաքրիչ կարող է օգտագործվել բենզին, լաքահանիչ միջոցներ, ունիվերսալ հետքահանիչ:
- Չի թույլատրվում օգտագործել միջոցներ, որոնք առաջացնում են թաղանթաշերտ. դրանցից են ափսեները լվացող հեղուկները, հեղուկ օճառը և այլն:



- Եթե, չնայած լամինատի ամրությանը, այնուամենայնիվ կհայտնաբերվի վնասվածքներ, փոքրվնասված տարածքները կարելի է վերանորոգել դրա համար հատուկ նախատեսված ձևավորող մածուկով: Ամբողջ հատակակտորի վնասվելու դեպքում այն պետք է փոխի մասնագետը: Անհրաժեշտության դեպքում, խնդրում ենք դիմել Ձեր մատակարարին:

Երաշխիքը

1. Այս երաշխիքը տարածվում է KASTAMONU լամինատե հատակների վրա, որոնք տեղադրված են բնակելի տարածքներում՝ հաշվի առնելով տեղադրման և շահագործման ցուցումները:
2. Երաշխիքային դեպք է համարվում հատակածածկույթի վնասվածքը՝ պաշտպանիչ շերտի մաքրման կամ ամբողջական հեռացման և դրա տակի դեկորատիվ թղթի հեռացման տեսքով: Այդ վնասվածքը պետք է հստակ տեսանելի լինի և հասնի ոչ պակաս քան 1 սմ:
3. Աննշան սեղմվածքները առանց մակերեսին ճաքերի կամ քերվածքների, որոնք առաջացել են կենցաղային իրերի վայր ընկնելու պատճառով, չեն վերաբերվում երաշխիքային դեպքերին: Սուր եզրերով առարկաներից առաջացած վնասվածքները նույնպես բացառվում են երաշխիքից:
4. Երաշխիքը չի տարածվում զուտ արտաքին վնասվածքների վրա, օրինակ, կահույքի տեղաշարժումից առայացած աղտոտման կամ սեղմվածքների վրա:

5. Երաշխիքը չի փոխհատուցում վնասը, որը առաջացել հատակի ծածկույթները ոչ նպատակային օգտագործելու, դժբախտ պատահարների, անհաղթահարելի ուժի ազդեցությունը և այլ հանգամանքների հետևանքով, որոնք բնորոշ չեն բնակելի շինությունների համար:
6. Երաշխիքը չի կարող փոխանցվել այլ անձի, այն պատկանում է միայն գևորդին:
7. Վնասված հատակի երեսարկման և հեռացման ծախսերը երաշխիքից բացառվում են:
8. Արտադրողը իրավունք է վերապահում մինչև երաշխիքային դեպքի ճանաչումը, իր ներկայացուցիչների կամ մատակարարի ներկայացուցիչների միջոցով գննել այն օբյեկտը, որտեղ տեղադրվել է հատակածածկույթ՝ տեղադրման և շահագործման պահանջների կիրառումը ստուգելու համար:

* Երաշխիքը տարածվում է լամինատի մակերեսի մաքրման վրա

1) Կարգը

2) Երաշխիքային ժամկետը՝ տնային օգտագործման

3) Երաշխիքային ժամկետը՝ առևտրային օգտագործման